Արձանագրություն N 3

Երևան քաղաքում եզրաքարերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

14.12.2016թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/11» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ը ներկայացված հարցման մասին

(Տ. Իգիթյան)

1.1 «Օրիոն 7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնության էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ճշտելու նպատակով հարցում էր ներկայացվել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ը:

1.2 Համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանման ««Օրիոն 7» ՍՊԸ-ի կողմից pdf ձևաչափով ներկայացված 9-րդ հավելվածը, որպես էլեկտրոնային փաստաթուղթ չի կարող համարվել էլեկտրոնային ստորագրությամբ ամրագրված էլեկտրոնային փաստաթուղթ»:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/11» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Տ. Իգիթյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Օրիոն 7» ՍՊԸ	Անբավարար
«Սեյսմշին» ՍՊԸ	Անբավարար
«Սուֆետ» ՍՊԸ	Բավարար
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	Բավարար
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	Անբավարար
«Համաշիննախագիծ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.2 «Օրիոն 7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել սույն արձանագրության 1.2 կետում նշված հիմնավորմամբ և համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի,

2.3 «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել սույն ընթացակարգի թիվ 2 արձանագրության 4.1 կետում նշված հիմնավորմամբ:

3. Բաց ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/11» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սուֆետ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն, 3-րդ տեղ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Տ. Իգիթյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 14.12.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 14.12.2016թ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ուղարկված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փոստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:45-ին, բայց ոչ ուշ քան 20.12.2016թ. ժամը 11:40-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան